բարեբաստիկն Լոյս-Պարոն. և «բանակք հրեշտակաց Աստուծոյ, — կ'ըսէ վկայագիրն, — շուրջ եղեն զնովաւ. և տէր մեր Յիսուս Քրիստոս յայտնապէս երթայր առաջի նորա, և ցուցանէր նմա զանթառամ պսակն. և սատանայ ամենայն դիւաքն իւրովք ի հեռաստանէ կացեալ՝ կրճտէր զատամունս իւր և ողբայր զկործանումն իւր՝ որ յաղթեցաւ ի փոքր մանկանէ միոջէ»։ Երեք անգամ ճամբուն վրայ կանգ առաւ դահիճն՝ խոստմամբք հրապուրելով և մերձաւոր մահուան մը վախով ուզելով ահաբեկել՝ իսկ նա ուրախ և զուարթադէմ կը նայէր մերկացեալ սրոյն որ երեք անգամ շողայր անմեղ պարանոցին վրայ, փափաքանաք անձկալով այն ցանկալի մահուան։

Մայիսի հնգետասան ու մարերի ութերորդ օրն էր յորում հանդիպեցաւ երջանիկ վկայիս նահատակութիւնը, և մարմինը անթիւ բազմութեամբ ամենայն քրիստոնեայ բնակչաց քաղաքին՝ ամփոփեցաւ պատուով։

Նոր Նախիջեւանի Սուրբ Խաչ եկեղեցւոյ Գանձարան գրքէ մը քաղենք հետեւեալ տողերը ի գովեստ նահատակին։

«Սուրբ Պարոն-Լոյս ծաղիկ ծիրանի,
Կարմիր արեամբ ներկեալ ի մարմնի.
Սուրբ Պարոն-Լոյս նոր շող երփնարփի՝
Աստղ առաւօտու նոր արուսեկի,
Սուրբ Պարոն-Լոյս նոր վարդ ի թըրիի՝
Ի ձմերային սուղ ժամանակի.
Սուրբ Պարոն-Լոյս նոր արեւնի,
Տընկեալ ի գնացքս ջրոյն կենդանի.